

բարեկարգութեան նկատմամբ, յուսարով որ իրենց մոլորութիւններուն անոնցմէ հաստատութիւն մը կը դանեն: Ասոնց թիւէն էր նաեւ Ուիքաութ անդղիացի ասպետը՝¹ որն որ 1680 ին մօտերը Ս-Պոլիս գալով՝ ուզեց նաեւ Հայոց եկեղեցւոյն վիճակին վրայօր ծանօթութիւններ առնուլ: Առ այս առաջնորդ մ'ունեցած է, ինչպէս ինք կը պատմէ, եկեղեցական մը որն որ իրեն ցուցուցած է իբրեւ Հայոց գլխաւոր հանդանակ՝ ան հաւատոյ դաւանութիւնը, զորն որ նաեւ Աբրտէր լատիներէն հրատարակած է, եւ է հետեւեալը:

Խոստովանիմք եւ հաւատամք ամենակատար սրտիւ զՀայրն Աստուած, անեղ, անծին եւ անսկիզբն, այլ եւ ծնող Որդւոյ եւ բղխող Հոգւոյն սրբոյ:

Հաւատամք զԲան Աստուած, անեղ, ծնեալ եւ սկսեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս, ոչ յետոյ եւ ոչ կըտսեր, այլ որքան Հայրն՝ Հայր, ընդ նմին եւ Որդին՝ Որդի:

Հաւատամք զսուրբ Հոգին անեղ, անժամանակ, ոչ ծնեալ այլ բղխեալ ի Հօրէ, էակից Հօր եւ փառակից Որդւոյ:

Հաւատամք զԵրրորդութիւնն սուրբ՝ մի բնութիւն, մի աստուածութիւն, ոչ երեք Աստուածք, այլ մի Աստուած, մի կամք, մի թագաւորութիւն, մի իշխանութիւն. արարիչ երևեցեաց եւ աներևութից:

Հաւատամք յեկեղեցի սուրբ. զԹողութիւն մեղաց. հաղորդութիւն սրբոց:

Հաւատամք զմինն յերից անձանց զԲանն Աստուած ծնեալ ի Հօրէ նախ քան զյաւիտեանս. ի ժամանակի իջեալ յԱստուածածին Կոյսն առեալ յարենէ նորա՝ միաւորեալ ընդ (խրում) աստուածութեան իննամսեայ ժուժկալեալ յարգանդ անարատ Կուսին, եւ եղեւ Աստուածն կատարեալ՝ մարդ կատարեալ, հոգւով եւ մտօք եւ մարմնով, մի անձն, մի դէմ՝ եւ միաւորեալ մի բնութիւն:

Աստուածն մարդացեալ առանց փոփոխման, առանց այլայլութեան, անսերմն յղութիւն եւ անսպական ծնունդ. որպէս ոչ է սկիզբն աստուածութեան նորա եւ ոչ վախճան մարդկութեան նորա զի Յիսուս Բրիստոս երէկ եւ այսօր, նոյն եւ յաւիտեանս:

Հաւատամք զտէրն մեր Յիսուս Բրիստոս շրջեալ ի վերայ երկրի, յետ երեսուն ամաց եկեալ ի մկրտութիւն, Հայր վկայեալ՝ Դա է Որդի իմ սիրելի, եւ Հոգին սուրբ աղանակեալ ի-

¹ Տես իրեն գիրքը՝ Histoire de l'estat présent de l'église Grecque et de l'église Arménienne, par M. le Chevalier Ricaut,

traduite de l'anglais, par M. de Rosemonde, Middelbourg, 1692.